



342(47)

R-11

42.4
2-91

205

№ 1 ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ № 1

«Պրոլետարներ բոլոր երկրների—միացէք»

05 FEB 2001

ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ)

Հրատարակւած է 1918 թվ, լույսի 19-ին,
«ՀԱՄԱՅՆ ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ԿՈՄԻՏԵՔԻ ՏԵՂԵԿԱՑՈՒՅ-ի № 151-ով:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

340
809-00

ՄՈՍԿԻԱ
Տպարան Եղբ. Կ. Ա. ՄՈՒՐԵԴԵՎՆԵՐԻ
1918

24 JUL 2013

Կ0652 - ակ 37.599.

ԹՈՒՍՍՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻՎ ԽՈՐ-
ՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ)

Համայն Ռուսաստանի Խորհուրդների 5-րդ Համագումարի որո-
շումը, ընդունած 1818 թի յուլիսի 10-ի նիստին:

Աշխատաւոր և շահագործող ժողովրդի իրա-
ւունքի գեկարացիան—հաստատւած 1918 թվի
յունարին համայն Ռուսաստանի 3-րդ համագումա-
րում—և Խորհուրդների Հանրապետութեան Սահ-
մանադրութունը—հաստատւած 5-րդ Համագումա-
րում—ի միասին կազմում են Համայն Ռուսաստանի
Սոցիալիստական ֆեդերատիվ Խորհուրդների Հանրա-
պետութեան միակ հիմնական օրէնքը:

Այս հիմնական օրէնքը ի կատար է ածւում
«Համայն Ռուսաստանի կենտրոնական Գործադիր Կո-
միտէի Տեղեկատու»-ի մէջ լոյս տեսած օրից: Խո-
հուրդների հշիանութեան տեղական մարմինները
պարտաւոր են աղքարարել այդ օրէնքը ի գիտու-
թիւն ամենքի և ցուցադրել Խորհուրդների բոլոր
հիմնարկութիւնների մէջ, աչքի ընկնող տեղերում:

5-րդ Համագումարը յանձնարարում է Լուսա-
ւորութեան ժողովրդական Կոմիտարին, որ նա



23142.60

ներկայ Սահմանադրութեան հիմունքների ուսումնա-
սիրութիւնը, ինչպէս և նրա բացատրութիւնն ու
մեխաբանութիւնը, մատնի Ռուսաստանի հանրապե-
տութեան բոլոր ուսումնարաններն ու դպրոցական
հիմնարկութիւններն անխափ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՇԽԱՏԱՀՈՐ ԵՒ ՇԱՀԱԳՈՐԾԻՈՂ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱ-
ՀՈՒԽՔԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

ԳԼՈՒԽ ԱՊԱՋԻՆ

1. Ռուսաստանը յայտարարում է իրեւ հան-
րապետութիւն Բանւոր, Զինւոր, Գիւղացի պատգա-
ծաւորութեանց Խորհուրդների: Լիակատար իշխա-
նութիւնը, թէ կենարուում և թէ աեզերում, պատ-
կանում է այդ Խորհուրդներին:

2. Ռուսաստանի Խորհուրդների հանրապետու-
թիւնը սահմանում է ազատ ազգերի դաշնակցու-
թեամբ, իրեւ ֆեղերացիա ազգային հանրապետու-
թեանց Խորհուրդների:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

3. Հիմնական նպատակ ունենալով ռչնչացնել
մարդի մարդուն շահագործելը, վերացնել բնդմիշտ
հասարակութիւնը դաստիարակերի բաժանելը, ևնշել
շահագործօղներին անխայ կերպով, հիմք դնել հա-
սարակութեան սոցիալիստական կաղմակերպութեանը
և սոցիալիստի յաղթանակին ամենուրեք—թ. Զ.

և Գ. Պ. Խորհուրդների համայն Ռուսաստանի Եր-
բորդ համագումարը ևս որոշում է:

ա. Հողի համայնացումը իրագործելու համար
վերացնել հողի մասնաւոր սեփականութիւնը և հո-
ղային ամբողջ Փոնդը յայտարարել իրեւ սեփակա-
նութիւն հանուր ժողովրդի և տալ աշխատաւո-
րին առանց որ և է վճարի հողի միահաւասար շա-
հագործման սկզբունքով: ✓

բ. Պետական նշանակութիւն ունեցող բոլոր ան-
տառները, հանքերը, ջրերը, նոյնպէս և ջնաւոր
անշունչ ողջ գոյքը, օրինակելի կալւածքները և
գիւղանտեսական ձեռնարկութիւնները յայտարարել
ազգային սեփականութիւն:

գ. Գործարանները, Փարբիկները, հանքերը,
երկաթուղիները և արգիւնաբերութեան ու փոխա-
գրութեան այլ միջոցները Բանւորական, Գիւղացիա-
կան Խորհուրդների հանրապետութեան սեփականու-
թիւնը դարձնելու զիտումով, իրեւ առաջին քայլ, հա-
ստատել Խորհուրդների օրէնքը բանւորական կոն-
տրոլի և ժողովրդական Տնտեսութեան Գերագոյն
Խորհուրդի մասին և այդպիսով ապահովել աշխա-
տաւորների տիրապետութիւնը ի դէմ շահագործող-
ների:

դ. Խորհուրդների օրէնքը փոխառութեանց ոչն-
չացման մասին—կնքւած ցարի, կալւածատէրերի և
բուրժուաղիացի ձեռքով—համարելով իրեւ առաջին
հարւածը միջազգացին Փինանսական և բանկային
կապիտալին՝ Յ-րդ համագումարը հաւասարի է, որ

Խորհուրդների Խշանութիւնը՝ անշեղ կը նթանալ այդ ուղիղ մինչև միջազգային բանւորական ապատամբութեան վերջնական լաղթանակը ընդդէմ կապիտալի:

Ե. Հաստատում է բոլոր բանկերի բանւորական և գիւղացիական պետութեան ձեռքն անցնելը, իբրև մէկը այն պայմաններից, որով աշխատաւոր մասսան պիտի ազատւի կապիտալի լծից:

Գ. Հաստակութեան մէջ մակաբոյծ տարրերը ոչնչացնելու և տնտեսական կեանքը կազմակերպելու նպատակով մուծել ընդհանուր պարտադիր աշխատանքը:

Ե. Աշխատաւոր մասսաների խշանութիւնը լիովին ապահովելու և շահագործողների տիրապետութեան դարձը անհնար կայուցանելու նպատակով հրատարակուում են օրէնքներ աշխատաւոր մասսաները զինելու, բանւորներից և գիւղացիներից սոցիալիստական կարմիր զօրաբանակներ կազմելու և ունեւոր գասակարգը միանդամայն զինաթափ անելու համար:

Գլուխ երրորդ

4. Յայտնելով իր անվեհեր վճիռը՝ աղատելու մարդկութիւնն այս, պատերազմներից ամենից յանցաւոր, պատերազմի ընթացքում աշխարհս արեան մէջ հեղեղող ֆինանսական կապիտալի և իմակերիալիզմի մագիներից—Խորհուրդների 3-րդ համագումարը ամբողջովին համամիտ է Խորհուրդների Խշանութիւնն վերած քաղաքականութեանը, ըստ որի խրզում են գաղտնի պայմանագրութիւնները, կազմա-

կերպում, լայն չափերով, այժմ գորքերի մէջ աիրող այն գրութիւնը, երբ միջիանց դէմ կռւող բանւորներն ու գիւղացիները իրար եզրայրութեան ձեռք են մեկնում, ճիզ է թափեռ ինչ գնով ուղում է լինի, յաղախուտական հանապարհով իրագործելու գեմոկրատիկ հաշառութիւնը, առանց գրաւումների և կողոպուաների, ըստ աղգերի աղատ ինքնորոշման:

5. Նոյն իսկ նպատակով Խորհուրդների 3-րդ համագումարը պնդում է խվել բարբարոս քաղաքականութեան կապերը բութուական, բաղաքակիթութեան հետ, այն քաղաքակրթութեան, որը շահագործողների բարեկեցութիւնը—մի բանի բնարեալ ազգերի մէջ—կառուցանում է Ասիայի, գաղութների և առհասարակ մանր երկների հարիւրաւոր միլիոն աշխատաւոր բնակչութեան սարկութեան վրայ:

6. Խորհուրդների համագումարը ողջունում է ժողովրդական Կոմիտարների Խորհրդի Քաղաքականութիւնը, ըստ որի նա ազգաբարեկ Ֆինլանդիայի լիակատար անկախութիւնը, սկսեց գուրս հանել Պարսկաստանից զօրքը և յայտարարեց հայտատանի աղատ ինքնորոշումը:

Գլուխ յորըրորդ

7. Բ. Զ. և Գ. Պ. Խ. թ. 3-րդ համագումարը ենթագրում է, որ այժմ, պրոլետարիատի վճռական կռւի մոմենտին ի դէմ շահագործողների, վերջիններս չափտի ունենան իշխանութիւն և ոչ մի մարմնի մէջ:

իշխանութիւնը պիտի պատկանի աշխատաւոր մաս-
սաներին լիովին և բացառապէս, և նրանց լիազօր
ներկայացուցչութեան՝ յանձինս Բ. Զ. և Գ. Պատգա-
մաւորութեանց Խորհուրդների:

8. Միւնոն ժամանակ ծգտելով Ռուսաստանի
բոլոր աշխատաւոր գասակարգերի մէջ սակածել իրա-
պէս աղատ և յօժարակամ, հետեւապէս և ընդարձակ
ու ամրագոյն միութիւն—Խորհուրդների Յ-րդ Հա-
մագումարը մշակում է Ռուսաստանի Խորհուրդների
Հանրապետութեանց ֆեղերացիալի միայն հիմնական
կէտերը, թողնելով, որ ամեն մի ազգի բանւորու-
թիւնն ու գիւղացիութիւնը ինքն իր սեփական Խոր-
հուրդների Համագումարում անկախօրէն վճռի, թէ
ցանկանում է արդեօք, և եթէ այս, ապա ի՞նչ հի-
մունքներով, մասնակցել ֆեղերատիվ կառավարու-
թեանը և միւս ֆեղերալ հիմնարկութեանց մէջ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴԻ

Հ. Ռ. Ս. Ֆ. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒ-
ԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՄՔՆԵՐԸ

Գլուխ հինգերորդ

9. Ներկայ անցողական ըուպէին Ռ. Ս. Ֆ. Խ.
Հանրապետութեան հիմնական ծրագիրն է հաստա-
տել քաղաքի և գիւղի պրոլետարիատի և չքաւոր
գիւղացիութեան դիկտատուրան յանձինս Համայն-
Ռուսաստանի հղօր Իշխանութեան, որպէսզի կարելի

լինի վերջնականապէս ճնշել բուրժուազիան, վերաց-
նել մարդը մարդուն շահագործելը, իրագործել սոցի-
ալիզմը, երբ այլ ևս չի լինի ոչ դասակարգային շեր-
տաւորումն և ոչ էլ պետական իշխանութիւն:

10. Ռուսաստանի Հանրապետութիւնը մի ազատ
հասարակութիւն է Ռուսաստանի բոլոր աշխատաւոր-
ների: Ամբողջ իշխանութիւնը Հ. Ռ. Ս. Ֆ. Հանրա-
պետութեան սահմաններում պատկանում է Երկրի,
—քաղաքների և գիւղերի Խորհուրդներում համախմբ-
ւած,—բանւորութեանը:

11. Տարբեր կենցաղ և աղջային տարբեր կազմ
ունեցող Խորհուրդները կարող են կազմել շրջանային
աւտոնոմ դաշնակցութիւններ, որոնց վկանը, ինչպէս
և ընդհանրապէս ամեն մի նոր կազմող միութիւն-
ների վկանը, կանգնած են շրջանների Համագումար-
ներն ու նրանց գործադիր մարմինները:

Շրջանային այդ աւտոնոմ միութիւնները, ֆե-
դերացիալի սկզբունքով, մտնում են Հ. Ռ. Ս. Ֆ. Խ.
Հանրապետութեան մէջ:

12. Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան գերագոյն
իշխանութիւնը պատկանում է Հ. Ռ. Ս. Ֆ. Խ.
Համագումարին, իսկ մէկից մինչեւ միւս Համագումար՝
Համայն Ռուսաստանի Կենտրոնական Գործադիր
Կոմիտէին:

13. Որպէս զի աշխատաւորութիւնը ապահով
լինի խղճի խսկական ազատութեան տեսակէտից՝ եկե-
ղեցին անջատուում է պիտութիւնից և ուսումնարանը
եկեղեցուց, իսկ բոլոր քաղաքացիներին ազատութիւն

է տրւում կրօնական և հակակրօնական պրոպագանդ մղելու:

14. Որպէս զի աշխատաւորութիւնը ապահով լինի իր կարծիքները իրապէս ազատ կերպով արտայայտելու՝ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. ոչնչացնում է մամուլի կախումը կապիտալից և լրագիրներ, բրոշիւրներ ու ամեն տեսակի այլ գրական արտադրութիւններ հրատարակելու և երկրում ազատ ցրելու համար բանւորների ու գիւղացիների ձեռքն է աալիս ամեն տեսակի տեխնիքական և նիւթական միջոցներ:

15. Որպէս զի աշխատաւորութիւնը ժողովների խսկական ազատութիւնից օգտուելու համար ապահով լինի՝ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ը ընդունելով, որ Խորհուրդների հանրապետութեան քաղաքացիները իրաւունք ունեն ժողովներ, միտինգներ, թափորներ և այլն ազատօրէն կազմակերպելու, բանւորների և աղքատ զիւղացիների տրամադրութեան տակ է դնում ժողովրդական հաւաքոյթների համար պիտանի բոլոր շինութիւնները կահ-կարասիքով, լուսաւորութեամբ և վառելիքով հանգերձ:

16. Որպէս չի աշխատաւորութիւնն ապահով լինի միութիւնների ազատութեան համար, Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ը ջնջելով ունեոր դասերի տնտեսական և քաղաքական գերիշխանութիւնը և աբդական վերացնելով այն բոլոր խոչընդուները, որոնք մինչ այս, բուժուական հասարակարգի օրով, արգելք էին հանդիսանում բանւորներին ու զիւղացիներին օգտուելու կազմակերպութեան և գործի ազատութիւնից, նա ըստ

ամենայնի թէ նիւթական և թէ այլ միջոցներով, նպաստում է այդ բանւորներին ու չունեոր զիւղացիներին միունան և կազմակերպութեան համար:

17. Որպէս չի աշխատաւորութիւնը ապահով լինի զիւտութեան մատչելիութեան համար, Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ը իր նպատակն է համարում բանւորներին և չունեոր զիւղացիներին տալ ծրի, բազմակողմանի և լիակատար կրթութիւն:

18. Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ը աշխատանքը համարում է հանրապետութեան բոլոր քաղաքացիների համար պարտադիր և ազգարարում է հետեւեալ նշանաբանը՝ ՇՈՎ չի աշխատում, նա հաց չպիտի ուտիւ:

19. Բանւորական և Գիւղացիական Յեղափոխութեան ծեռք բերած ազատութիւններն ըստ ամենայնի պաշտպանելու նպատակով Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ը ամեն մի քաղաքացու վրայ պարտք է դնում պաշտպանել սոցիալիստական հայրենիքը և դրա համար սահմանում է ընդհանուր զինւորական ծառայութիւն: Զէնքը ծեռքին հայրենիքը պաշտպանելու պատւաւոր իրաւունքը նա վերապահում է միմիայն աշխատաւորութեանը, մինչ դեռ անաշխատաւոր տարբերի համար նա թողնում է այլ զինւորական պարտաւորութիւններ:

20. Բոլոր ազգերի աշխատաւորութեան համերաշխութիւնը ելակեատ ունենալով, Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ը այն օտարեկրացիներին, որոնք ապրում են Ռուսաստանի հանրապետութեան սահմաններում իրենց աշխատանքով և պատկանում են բանւորական գասակար-

դին կամ ուրիշի աշխատանքով չօգտուող զիւղացիութեանը, հնարաւորութիւն է տալիս վայելելու Ռուսաստանի քաղաքիցների բոլոր քաղաքական իրաւունքներից, իրաւունք է տալիս բոլոր աեղական Խորհուրդներին, որ նրանք թոյլ տան ալդ օնարահպատակներին, առանց որ և է կաշկանդիչ ձեւականութեան, վայելելու Ռուսաստանի քաղաքացիութեան իրաւունքից:

21. Քաղաքական և կրօնական յանցանքի համար հայածանքների Ենթակայ օտարահպատակներին, Ռ. Ա. Ֆ. Խ. Հ-ը հիւրանկալում է իր երկրում:

22. Ընդունելով քաղաքացիների հաւասար իրաւունքը առանց ցեղի և կրօնի խարութեան,—Ռ. Ա. Ֆ. Խ. Հ-ը իր հիմնական օրէնքների ահսակէտից հակասելի է համարում կարգել կամ թոյլ տալ ալդ հողի վրայ որև. է արտօնութիւն ու առաւելութիւն, ինչպէս և ընդհանրապէս աղղային փոքրամասնութեան ճնշում ու իրաւունքների կրնատում:

23. Բանւորական շահերը ուղեցոյց ունենալով Ռ. Ա. Ֆ. Խ. Հ-ը մասնաւոր անհատներին և մասնաւոր խաւերին զրկում է այն իրաւունքներից, որոնցից նրանք օգտուում են ի վնաս սոցիալիստական յեղափոխութեան:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԽՈՐՀՈՒԹԻՆԵՐԻ ԽՇԱՅԱՌԻԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՂԻ ԹԻՒՆԸ

Ա. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ Իշխանութեան կազմակերպութիւնը

ԳԼՈՒԽ ՎԵցերորդ

Համայն Ռուսաստանի Բանտոր, Գրիգորի Կազակ և Կարմիր Քնդի Զինուոր Պատգամատոնների Խորհրդի մասին

24. Համայն Ռուսաստանի Խորհուրդների Համագումարը Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդների Հանրապետութեան գերագոյն իշխանութիւնն է:

25. Համայն Ռուսաստանի Խորհուրդների Համագումարը կազմում է քաղաքների և նահանգների խորհուրդների Համագումարների ներկայացուցիչներից այն հաշով, որ առաջիններից 1 պատգամաւորը ընտրած լինի 25000 հոգուց, իսկ երկրորդներից 1 պատգամաւորը՝ 125000 հոգուց:

Ծանօթութիւն 1. Այն գէպքում, երբ Հ. Ռուսաստանի Համագումարը կայանում է աւելի առաջ, քան նահանգային՝ գաւառական համագումարները իրենց պատգամաւորերին ուղարկում են անմիջապէս Հ. Ռ. Համագումարը:

Ծանօթութիւն 2. Այն գէպքում, երբ Հ. Ռ. Համագումարը կայանում է անմիջապէս նախ քան շրջանային Համագումարը, այն ժամանակ վերջինս իր պատգամաւորներին կարող է ուղարկել Հ. Ռ. Համագումարը:

26. Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն հրաւիրում է Հ. Ռ.
Համագումարը ոչ պակաս, քան տարին երկու ան-
դամ:

27. Հ. Ռ. Խ. Արտակարդ Համագումարը հրա-
ւիրում է Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն իր յատուկ նա-
խածեռնութեամբ, կամ այն տեղերի խորհուրդների
պահանջմամբ, ուր աղջաբնակութեան քանակը կազմում
է ոչ պակաս, քան Հանրապետութեան մէկ երրորդ
մասը:

28. Հ. Ռ. Խ. Համագումարը ընտրում է Հ. Ռ.
Կենտրոնական Գործադիր Կոմիտէն՝ թւով ոչ աւելի,
քան 200 հոգի:

29. Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն պատասխանառուէ
Հ. Ռ. Խ. Համագումարի առաջ:

30. Մի Համագումարից մինչև միւս Համագու-
մարը հանրապետութեան գերագոյն իշխանութիւնը
պատկանում է Համայն Ռուսաստանի Կենտրոնական
Գործադիր Կոմիտէին:

Գլուխ եօթերորդ

Համայն Ռուսաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտէի
մասին

31. Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն Ռ. Ս. Ֆ. Խ.
Հանրապետութեան գերագոյն օրէնսդրական, կար-
գագիր և վերահսկող մարմինն է:

32. Համայն Ռուսաստանի Կենտրոնական Գոր-
ծադիր Կոմիտէն ընդհանուր ուղղութիւն է տալիս
բանորական և գիւղացիական պետութեան և երկրի

Խորհուրդների բոլոր մարմինների գործունեութեանը,
միաւորում, համաձայնեցնում է օրէնսդրական և վար-
չական աշխատանքները, հակում է, որ կեանքի մէջ
Խորհուրդների սահմանադրութիւնը, Հ. Ռ. Խ. Հա-
մագումարների և Խորհուրդների իշխանութեան կեն-
տրոնական մարմինների որոշումներն իրագործւեն:

33. Համայն Ռուսաստանի Կենտրոնական Գոր-
ծադիր Կոմիտէն Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
կամ զանազան վարչութիւնների կողմից առաջադրուող
գեկրետների և այլ առաջարկութիւնների ծրագիր-
ները նախաբնում է և հաստատում, և հրատարա-
կում է իր սեփական գեկրետներն ու կարդադրու-
թիւնները:

34. Համայն Ռուսաստանի Կենտրոնական Գոր-
ծադիր Կոմիտէն հրաւիրում է Համայն Ռուսաստա-
նի Խորհուրդների Համագումարը և նրան հաշիւ է
տալիս իր գործունեութեան մասին ու գեկուցանում
է ընդհանուր բաղաքական և այլ հարցերի մասին:

35. Համայն Ռուսաստանի Կենտրոնական Գոր-
ծադիր Կոմիտէն կաղմում է Ժողովրդական Կոմի-
սարների Խորհուրդը Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետու-
թեան գործերը վարելու, և բաժանմունքներ (Ժողո-
վրդական Կոմիսարիատներ) վարչութեան տարբեր
ճիւղերը գեկավարելու համար:

36. Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէի անդամները աշխա-
տում են բաժանու մըներում (Ժողովուգական Կոմի-
սարիատներում) և կատարում են Հ. Ռ. Գ. Կոմի-
տէի բառու կ լանձնարարութիւնները:

Գլուխ ութերորդ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի մասին

37. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի մասին
վարում է Ռ. Ա. Հ. Խ. Հանրապետութեան ընդհանուր գործերի:

38. Այդ նպատակով Ժ. Կ. Խ-ը հրատարակում է գեկրետներ, կարգադրութիւններ, հրահանգներ և առհասարակ ձեռք է առնում պետական կեանքի կանոնաւոր և արագ ընթացքի համար անհրաժեշտ բոլոր միջոցները:

39. Ժ. Կ. Խ-ը իր բոլոր որոշումներն ու վճիռները անմիջապէս հաղորդում է Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն:

40. Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն իրաւունք ունի Ժ. Կ. Խ-ը բոլոր որոշումներն ու վճիռները բեկանելու կամ գագարեցնելու:

41. Քաղաքական ընդհանուր և մեծ նշանակութիւն ու եցող բոլոր որոշումներն ու վճիռները Ժ. Կ. Խ-ը առաջարկում է Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն իրնութիւն և հաստատութիւն:

Ծանօթութիւն: Այն միջոցները, որոնք պահանջում են անխաղաղ գործադրութիւն, Ժ. Կ. Խ-ը կարող է իրագործել անմիջապէս:

42. Ժ. Կ. Խ-ի անդամները կանգնած են ժողովրդական զանազան Կոմիսարիատների գլուխը:

43. Կազմում են հետեւել 17 ժող. Կոմիսարիատները:

23142-60

1003
1451

- ա) Արտաքին գործերի,
- բ) Զինուորական գործերի,
- գ) Ծովային գործերի,
- դ) Ներքին գործերի,
- ե) Արդարադատութեան,
- զ) Աշխատանքի,
- է) Սոցիալական առահովութեան,
- ը) Ժողովրդական լուսաւորութեան,
- թ) Փոստի և հեռագրատան,
- ժ) Ազգային գործերի,
- ժա) Մինանսների,
- ժբ) Հաղորդակցութեան,
- ժգ) Հողագործութեան,
- ժդ) Առևտուրի և արդիւնաբերութեան,
- ժե) Ժողովրդական պարենաւորման,
- ժգ) Պետական կանարօղի,
- ժէ) Ժողովրդական տնտեսութեան գերագոյն խորհրդի:
- ժը) Առողջապահութեան:
- 44. Ամեն մի ժողովրդական կոմիսարին կից, վերջինիս նախագահութեամբ, կազմում է կոլեգիա, որի անդամները հաստատում են ժող. Կ. Խ. Կողմից:
- 45. Ժողովրդական կոմիսարը իր Կոմիսարիատին ենթակայ բոլոր ինդիբների վերաբերեալ ինքնազմուխ իրաւունք ունի վճիռներ կալացնելու, այդ մասին տեղեկացնելով իր կոլեգիային: Այն դէպքում, եթէ կոլեգիան համաձայն չէ ժողովրդական կոմիսարի այս կամ այն վճիռներին, այն ժամանակ նա կարող է, առանց վեռի իրագործումը դադարեցնելու, բողոքել ժ. Կ. Խորհրդին կամ Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէի Ատեանին:



✓

Բողոքի նոյն իրաւունքն ունեն և կոլեգիալի
առանձին անդամները:

46. Ժ. Կ. Խ.-Ր. լիովին պատասխանատու է Տ.
Ռ. Խ. Համագումարի և Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէի առաջ:

47. Ժողովրդական Կոմիտաներն ու Ժ. Կո-
միտարիաների կոլեգիաները լիովին պատասխանա-
տու են Ժ. Կ. Խոհրդի և Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէի առաջ:

48. Ժողովրդական Կոմիտարի կոչումը պատկա-
նէում է բածարձակավէս ժողովրդական Կոմիտաների
Խորհրդի անդամներին, որոնք փարում են, Ռ. Ս. Ֆ. Խ.
Հանրապետութեան դորձերը, և Խորհուրդների իշխա-
նութեան և ոչ մի ներկայացուցիչը, ոչ կենարունում
և ոչ էլ աեղերում, չի կարող կրել այդ կոչումը:

Գլուխ իններորդ

Համայն Խուսաստանի Խորհուրդների Համագումարի և Համայն
Խուսաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտէի իրաւահա-
սութեան ենթակայ առարկաների մասին

49. Տ. Ռ. Խ. Համագումարի և Հ. Ռ. Կ. Գ.
Կոմիտէի իրաւահասութեան ենթակայ են ընդհանուր
քաղաքական բնոյթ կրօղ բոլոր խնդիրները, ալսինքն՝
այ) Խուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ
Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրու-
թեան հաստատումը:

բ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան ներքին և
արտաքին քաղաքականութեան ընդհանուր զեկավա-
րութիւնը:

գ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան հոգամա-
սերի կամ Հանրապետութեան պատկանող իրաւունք-

ների սահմանների որոշումն ու փոփոխութիւնը,
նաև և սեփականութիւնից հրաժարուելը.

դ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան կազմի
մէջ մտնող շրջանալին խորհուրդների դաշնակցու-
թեանց սահմանների և իրաւահասութեան որոշումն
և նրանց մէջ ժագած վէճերի լուծումը.

ե) Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան կազմի
մէջ մտնող նոր խորհուրդների ընդունելութիւնը և
Ռուսաստանի Փեղերացիայից առանձին մասերի զա-
ման փաւերացումը.

զ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան ընդհա-
նուր ազմինխստապահի բաժանումն ու շրջանալին
միութիւնների հաստատումը.

է) Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան տերիսո-
րիայում չափի, բաշի և գրամի սիստեմների հաստա-
տութիւնն ու փոփոխութիւնը.

ը) Օտար պետութիւնների հետ յարաբերու-
թիւնը, պատերազմի յայտարարութիւնը և հաշտու-
թեան կնքումը.

թ) Փոխառութեանց ու ֆինանսական համա-
ծախութեանց կնքումը, նոյնպէս և մաքսալին ու
առևտրական պայմանագրութիւնները.

ժ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան սահման-
ներում ժողովրդի ողջ անտեսութեան և վերջինիս
զանազան նիւղերի հիմունքների և ընդհանուր ծրագրի
հաստատումը.

ժա) Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան բիւջէի
փաւերացումը.

ժբ) Համապետական հարկերի ու տուրքերի կար-
գումը.

ԺՊ) Ռ. Ա. Ֆ. Խ. Հանրապետութեան դինու-
րական ուժերի կաղմակերպութեան հիմունքների
հաստատումը.

ԺՊ) Համապետական օրէնսդրութիւնը, լրատն ու
դատավարութիւնը, բաղաքացիական, քրէտական օրէնս-
դրութիւնը և այլն.

ԺԷ) Ժառագրական Կոմիսարների Խորհրդի
ինչպէս առանձին անդամների, նոյնպէս և ամբողջ
կազմի նշանակելն ու պաշտօնից հեռացնելը, նաև ժո-
ղովրդական կոմիսարների նախագահի հաստատումը.

ԺՊ) Խուսաստանի բաղաքացիութեան իրաւունք
ստանալու ու կորցնելու, և Հանրապետութեան սահ-
ներում առլող օտարերկրացիների իրաւունքի վերա-
բերեալ որոշումների հրատարակութիւնը.

ԺԷ) Ընդհանուր և մասնաւոր ամսիստականի
իրաւունքը:

50. Բացի վերոյիշեալ հարցերից Հ. Ռ. Խ.
Համագումարն ու Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն վճռում են
այն հարցերը, որոնց նկատմամբ իրենք իրենց իրա-
ւահաս են դանում:

51. Համայն Խուսաստանի Խորհուրդների Հա-
մագումարի բացառիկ իրաւունասութեան ենթակայ են՝

ա) Խորհուրդների Սահմանադրութեան հիմնա-
կան սկզբունքների սահմանումը, լրացումը և փոփո-
խութիւնը.

բ) Հաշտութեան պայմանների ռատիֆիկացիան:

52. Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն իրեն է վերապա-
հում և յօդւածի գ. և թ. կետեւում արծարծւած
հարցերի որոշումը միայն այն դէպքում, եթե ննա-

բառոր չէ դումարել համայն Խուսաստանի Խոր-
հուրդների Համագումարը:

Բ. Խորհուրդների իշխանութեան կազ-
մակերպութիւնը անդերում

Դլուխ տասներորդ

Խորհուրդների Համագումարների մասին

53. Խորհուրդների Համագումարները ժողովում
են հետևեալ կերպով՝

ա) Երկրացինը — կամ բաղաքների և զտւառնե-
րի խորհուրդների ներկայացուցիչներից, այն հաշով,
որ ամեն մի 25000 ընտրողին գայ 1 պատգամատոր,
իսկ բաղաքներից՝ ամեն մի 5000 ընտրողին՝ 1 պատ-
գամատոր. սակայն ոչ առել քան 500 պատգամատոր
ամբողջ երկրից, կամ թէ չէ նոյն նորմալով ընտրւած
նահանգային Խորհուրդների Համագումարների ներկա-
յացուցիչներից, եթէ այդ Համագումարները ժողով-
ում են երկրացին Համագումարից անմիջապէս առաջ:

բ) Նահանգայինը (շրջանային) — բաղաքների
Խորհուրդների և վոլոսաների Համագումարների ներ-
կայացուցիչներից, այն հաշով, որ ամեն մի 10000
ընակչին գայ 1 պատգամատոր, իսկ բաղաքներում
ամեն մի 2000 ընտրողին՝ 1 պատգամատոր, սակայն
ոչ առել քան 300 պատգամատոր ամբողջ նահանգից
(շրջանից): Այն դէպքում, եթի գտառական Խոր-
հուրդների Համագումարը ժողովում է անմիջապէս,
նաև քան նահանգականը, ընտրութիւնները կատա-

ըում է նոյն նորմայով վոլոստների համագումարների տեղ գաւառների համագումարը:

գ) Գաւառականը (ռայոնական) — գիւղական խորհուրդների ներկայացուցիչներից, այն հաշւով, որ ամեն մի 1000 բնակիչին գայ 1 պատգամաւոր, սակայն ոչ աւել քան 300 պատրամաւոր ամրող գաւառից (ռայոնից):

դ) Վոլոստներինը — վոլոստի բոլոր գիւղերի ներկայացուցիչներից, այն հաշւով, որ ամեն մի 10 անդամին գայ 1 պատգամաւոր:

Ծանօթութիւն 1. Գաւառական համագումարներին մասնակցում են 1000 հոգուց ոչ աւել բնակիչ ունեցող բազաքների ներկայացուցիչները: 1000 հոգուց պակաս բնակիչ ունեցող գիւղական Խորհուրդները միանում են, որպէսզի կարողանան գաւառական համագումարին պատգամաւոր ընարել:

Ծանօթութիւն 2. 10 հոգուց պակաս անդամ ունեցող գիւղական Խորհուրդները վոլոստների համագումարը ուղարկում են 1-ական պատգամաւոր:

54. Խորհուրդների համագումարները ժողովում են Խորհուրդների իշխանութեան տեղական համապատասխան գործադիր մարմինները (գործադիր կոմիտեները) ըստ իրենց հայեցողութեան, կամ թէ չէ տեղական Խորհուրդների պահանջմամբ, եթի պահանջողների թիւը տւեալ ռայոնի ազգաբնակութեան ^{1/3} մասն է կազմում, սակայն, յամենայն դեպս, ոչ պակաս, քան տարին 2 անգամ երկրամասերումը, 3 ամի-

ր 1 անգամ նահանգներում ու գաւառներում և ամիար 1 անգամ վոլոստներում:

55. Խորհուրդների համագումարը (Երկրային, նահանգների, գաւառական, վոլոստների) ընարում է իր գործադիր մարմինը՝ Գործադիր կոմիտեն, որի անգամների թիւը չպիտի աւել լինի, քան 25 հոգի, ը) գաւառներում 20 հոգի, գ) վոլոստներում՝ 10 հոգի: Գործադիր կոմիտեն ամբողջովին պատասխանառու է իրեն ընարող Խորհուրդների համագումարների առաջ:

56. Իրենց իրաւահասութեան սահմաններում Խորհուրդների այդ համագումարները (Երկրային, նահանգների, գաւառական, վոլոստների) տւեալ տերրիտորիալի գերագոյն իշխանութիւնն են: Խոկ մի համագումարից մինչև միւս համագումարը այդ իշխանութիւնը պատկանում է Գործադիր կոմիտեն:

Գլուխ տասնչերորդ

Պատգամաւորների Խորհուրդների մասին

57. Պատգամաւորների Խորհուրդները կազմում են

ա) Քաղաքներում — այն հաշւով, որ ամեն մի 1000 հոգուն գայ մի պատգամաւոր, սակայն թւոց ոչ պակաս քան 50 և ոչ աւել քան 1000 անգամ:

բ) Գիւղերում գիւղերում, գիւղաբազներում, ստանիցիաներում, աւաններում, 10000 հոգուց պակաս բնակիչ ունեցող բազաքներում, առևներում, խուտրներում) — այն հաշւով, որ ամեն մի 1000

բնակչին գալ 1 պատգամաւոր, սակայն ոչ պակաս քան
3 և ոչ աւել քան 50 պատգամաւոր ամեն մի գիւղից:

Պատգամաւորների լիսազօրութեան ժամանակա-
շրջանը 3 ամիս է:

Ծանօթութիւն. Այն գիւղօրալրում,
ուր հնարաւոր է իրագործել, ընարողները տեղն
ու տեղը վճռում են վարչական խնդիրները:

58. Պատգամաւորների խորհուրդը ընթացիկ
գործերի համար իր միջից ընարում է գործադիր
մարմին (Գործադիր Կոմիտէ), թւով՝ գիւղերում, ոչ
աւելի քան 5 հոգի, քաղաքներում՝ ամեն մի 50 ան-
գամից՝ 1 հոգի, բայց ոչ պակաս քան 3 և ոչ աւել
քան 15 հոգի (Պետական բարերարության և Մոսկվա՝ ոչ աւել քան
50 հոգի): Գործադիր Կոմիտէն լիսպին պատասխա-
նատու է իրեն ընարող Խորհուրդի առաջ:

59. Պատգամաւորների Խորհուրդը հրաւիրում
է Գործադիր Կոմիտէն՝ ըստ իր հայեցողութեան կամ
թէ չէ Խորհուրդի անդամների առ նւազն կէսի պա-
հանջմամբ, սակայն քաղաքներում՝ առ նւազն շա-
րաթը 1 անգամ և գիւղերում՝ շարաթը 2 անգամ:

60. Իր իրաւահասութեան սահմաններում Խոր-
հուրդը կամ 57-րդ Տ-ի (Ճանօթութեան) մէջ նա-
խատեսած դէպքում, ընդրողների ընդհանուր ժո-
ղովը հանդիսանում է տւեալ տերիտորիայի գերա-
գոյն իշխանութիւնը:

Գլուխ տասնը կուերորդ
Խորհուրդների իշխանութեան տեղական մարմինների իրաւահա-
սութեան առարկանները

61. Խորհուրդների Իշխանութեան երկրակին,
նահանգական, գաւառական և վոլոստների մարմին-

ների, նոյնպէս և Պատգամաւորների Խորհուրդների
գործունէութիւնը կարանում է հետևեալում.

ա) Իրագործել Խորհուրդների իշխանութեան
համապատասխան գերագոյն մարմինների բոլոր կար-
գագրութիւնները:

բ) Զեռք առնել ամեն միջոց՝ զարկ աալու
տւեալ տերիտորիայի կուլտուրական և տնտեսական
գարգացմանը:

շ) Լուծել զուտ տեղական (տւեալ տերրիտորի-
ալի) բնոյթ կրող բոլոր խնդիրները:

դ) Նաղկապել տւեալ տերիտորիայի սահմաննե-
րում Խորհուրդների գործունէութիւնը:

62. Խորհուրդների համագումարներն ու նրանց
Գործադիր Կոմիտէները կանարովի իրաւունք ունեն
տեղական Խորհուրդների գործունէութեան վրայ
(այսինքն՝ երկրակին Խորհուրդները իրաւունք ունեն
կանուրով ենթարկելու երկրի բոլոր Խորհուրդները,
նահանգային՝ նահանգի բոլոր Խորհուրդները, բայց
քաղաքներից, որոնք չեն մտնում գաւառական համա-
գումարի կազմը և այն), իսկ երկրակին և նահանգա-
կան համագումարներն ու նրանց Գործադիր Կոմի-
տէները, բայց այդ, իրաւունք ունեն բեկանել իրենց
ռայոնում գործող Խորհուրդների որոշումները, կարեւը
գէպքերում հասցնելով այդ մասին ի զիտութիւն
Խորհուրդների կենտրոնական իշխանութեան:

63. Խորհուրդների Իշխանութեան մարմինների
վրայ զրած պարտականութիւնները ի կատար ամելու
համար Խորհուրդներին կից (քաղաքների և գիւղերի)

և Գործադիր Կոմիտէներին կից (Երկրագին, նահանգական, գաւառական և վոլոստների) իրենց յատուկ վարիչներով կաղմւում են համապատասխան հիւղեր:

ՄԱՍՆ ԶՈՐՈՌՈԴ
ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԱԿՑԻԻ ԵՒ ՊԱՍՍԻԻ ԻՐԱԾԻՈՒՅՔ

ԳԼՈՒԽ ՄԱՍԵՐ ԵՔԵՐՈՒՐԴ

64) Խորհուրդներին պատգամաւոր ընտրելու և ընտրելու իրաւունք ունեն 18 ապրին լրացած Ռ. Ա. Ֆ. Խ. Հանրապետութեան հետեւալ քաղաքացիները՝ առանց ազգի, կրօնի, նստակեացութեան և այլ խտրութիւնների.

ա) Արդիւնաբերական և հասարակաօդուտ աշխատանքով ապրուստի միջոցը ամեն մի հայթհայթող, նոյնպէս և տնայնագործութեամբ ամեն մի պարապող, որը ալդափառվ ապահովում է իր արդիւնաբերող աշխատանքը, այսինքն արդիւնաբերութեան, առելորի, զիւղատնակառութեան մէջ զբաղւած ամեն աեսակի և գասի բանորն ու ծառայողը, զիւղացին ու կազակ-հողագործը, որոնք իրենց շահի համար վարձու աշխատանքից չեն օգտուում:

բ) Խորհուրդների գորքի և նաւատորմղի զինուորները:

գ) 64-րդ յօդւածի 1 և 2 կէտերի մէջ լիշտած կատեգորիաների մէջ մտնող այն բոլոր քաղաքացիները, որոնք որևէ է չափով կորցրել են աշխատանքի կարութիւնը:

Ծանօթութիւն 1. Տեղական Խորհուրդները կարող են կենտրոնական իշխանու-

թեան թովուութեամբ իշեցնել ներկայ յօդւածում սահմանւած տարիքի նորման:

Ծանօթութիւն 2: Ակտիւ և պաստիւրնարողական իրաւունք ունեն Ռուսաստանի քաղաքացիների ցանկը չմտածներից նրանք, որոնց մասին լիշտատակւած է 20-րդ յօդւածում (Մասն III, գլուխ 5):

65. Զեն ընտրում և չեն ընտրուում, թէկուղ և մտնելիս լինեն վերոիշեալ կատեգորիաներից մէկն ու մէկի մէջ՝

ա) Նրանք, որոնք շահի համար օգտուում են վարձու աշխատանքից:

բ) Նրանք, որոնց ապրուստի միջոցները կազմում են անաշխատուոր եկամոււաները, այսինքն կապիտալի տոկոսները, ձեռնարկութեանց շահերը, կալերի եկամոււաները:

շ) Մասնաւոր առեւտրականները և առեւտրական միջնորդները:

զ) Եկեղեցական և կրօնական դաւանանքների հոգևոր սպասաւորներն ու կուսակրօնները:

է) Նախկին ռատիկանութեան, ժանդարմերիալի յատուկ կորպուսի և պահնորդական բաժանմութների ագենտներն ու ծառայողները, նաև Ռուսաստանում թագաւորած տան անդամները:

ը) Նրանք, որոնք սովորական կարգով նանաչւած են իբրև հոգեկան հիւանդներ կամ խելափրոյսներ, նաև նրանք, որոնք խնամակալներ ունեն:

է) Նրանք, որոնք այնքան ժամանակ, որքան որ շահախնդիր և արատաւոր լանցանքների համար

ընդունւած օրէնքով կամ գատական վճիռով ենթա-
կայ են պատճի:

Գլուխ տասը որսերորդ
Ընարութիւնները

66. Ընտրութիւնները կատարւում են բառ սո-
վորութեան, տեղական Խորհուրդների օրոշած օրը:

67. Ընտրութիւնները կատարւում են ընտրո-
ղական յանձնաժողովի և տեղական Խորհրդի ներկա-
յացուցչի ներկայութեամբ:

68. Այս դէպքում, երբ Խորհուրդների իշխա-
նութեան ներկայացուցչիք տեխնիքական պատճառ-
ներով բացակայում է, նրան փոխարինում է ընտրո-
ղական յանձնաժողովի նախադահր, իսկ վերջինիս
բացակայութեան դէպքում՝ ընտրողական ժողովի
նախադահր:

69. Ընտրութեան ընթացքի և հետևանքի մա-
սին, ստորադրութեամբ ընտրողական յանձնաժողովի
անդամների և խորհրդի ներկայացուցչի, կաղմում է
արձանագրութիւն:

70. Համաձայն Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէի հրահան-
գի տեղական խորհուրդները մանրամասնօրէն մշակում
են ընտրութիւնների կարգը և որոշում արհեստակ-
ցական և այլ բանւորական կազմակերպութեանց
մասնակցութեան խնդիրը:

Գլուխ տասենինքերորդ

Ընտրութիւնների ստուգման և բնկանման և պատղամատորների
յնտ կոչման մասին

71. Ընտրութիւնների վերաբերեալ բոլոր նիւ-
թերը յանձնւում են համապատասխան Խորհուրդներին:

72. Ընտրութիւնների ստուգման համար նշա-
նակում է մանդամալին յանձնաժողով:

73. Ստուգման հետևանքի մասին մանդամալին
յանձնաժողովը զեկուցանում է Խորհրդին:

74. Խորհուրդը լուծում է վիճելի թեկնածու-
ների հասաստածան խնդիրը:

75. Այս կամ այն թեկնածուին չհաստատելու
դէպքում Խորհուրդը նշանակում է նոր ընտրութիւն-
ներ:

76. Թէրի ընտրութիւնների դէպքում, ընդհան-
րապէս, ընտրութիւնների բեկանման խնդիրը լուծում
է խորհրդների իշխանութեան աստիճանով բարձր
մարմինը:

77. Համայն Ոուսաստանի Կենտրոնական Գոր-
ծադիր Կոմիտէն Խորհուրդների ընտրութեան վեր-
ջին վնասարեկ ատեմնն է:

78. Ընտրողները իքաւունք ունեն ամեն ժա-
մանակ յետ կանչել Խորհրդից իրենց ընտրած պատ-
ղամատորին և համաձայն ընդհանուր կանոնադրու-
թեան ընտրել նոր պատղամատոր:

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՒՐԴԻ

ԲԻՒՋԵԻ ԻՐԱՀՈՒԽԵՔԸ

Գլուխ տասկեցերորդ

79. Աշխատաւորութեան դիկաստուրայի այս
անցողական մոմենտին Ռ. Վ. Ֆ. Խ. Հանրապեաու-
թեան ֆինանսական բազարականութիւնն աջակցում
է բուրժուազիան էքսպրոպրիացիայի ենթարկելու

հիմնական նպատակին և արդիւնաբերութեան ու հարստութեան բնագաւառում Հանրապետութեան քաղաքացիների ընդհանուր հաւասարութեան համար նախապայմաններ ստեղծելուն: Այդ նպատակով նա իր պարտքն է համարում Խորհուրդների Հանրապետութեան տեղական և համապետական պէտքերը հոգալու համար Խորհուրդների Խշանութեան արածագրութեան առաջնորդները, կանգ չառնելով իսկ մասնաւոր սեփականութեան իրաւոնքի խախտման առաջ:

80. Ռուսաստանի Սոցիալիստական Մեդերատիվ Խորհուրդների Հանրապետութիւնը իր պետական և կամուաներն ու ծախքերը համախմբում է իր ընդհանուր պետական բիւզէի մէջ:

81. Հ. Ռ. Խ. Համագումարը կամ Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն որոշում են, թէ եկամուտների ու հասովթների ո՞ր տեսակները պիտի մանեն համապետական բիւզէի մէջ և ո՞ր տեսակները պիտի դնել տեղական Խորհուրդների տրամադրութեան տակ: Նրանք սահմանում են նաև տուրքերի չափը:

82. Խորհուրդները հարկերն ու հասովթները նշանակում են բացառապէս յօդուա տեղական տնտեսութեան: Համապետական կարիքները հոգացում են ի հաշիւ պետական գանձարանից բաց թողւած միջոցների:

83. Համապետական նշանակութիւն ունեցող կարիքներին բաւարարութիւն տալու համար Ժողովրդական Կոմիտարիատները պետական գանձարանից

տեղական Խորհուրդների տրամադրութեան տակ են գնում անհրաժեշտ կրեդիտներ:

85. Պետական գանձարանից Խորհուրդներին բաց թողած կրեդիտները, նոյնպէս և այն կրեդիտները, որոնք բաց են թողւած տեղական կարիքների համար, մախսուում են, համաձայն հաստատւած նախահաշւի, նախահաշւի մէջ ցուցւած ստորաբաժինների (պարագրաֆների և յօդւածների) սահմաններում, և առանց Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէի և Փող. Կոմ. Խորհրդի յառուկ որոշման չի կարելի յատկացնել մի այլ կարիքի:

86. Տեղի Խորհուրդները տեղական կարիքների համար կազմում են ել և մուտքի մի և կէս ամեայնախահաշւներ: Նահանգական և երկրային Համագումարները կամ նրանց Գործադիր Կոմիտէները հաստատում են գիւղական և վոլոստների Խորհուրդների և գաւառական Խորհուրդներին մասնակցող բաղաքների խորհուրդների նախահաշւները: Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն և Փող. Կոմ. Խորհուրդը հաստատում են խորհուրդների իշխանութեան բաղաքային, նահանգական և երկրային մարմինների նախահաշւները:

87. Հաշւի մէջ նախաեւնաւած ծախսերի համար, նոյնպէս և նախահաշւի մէջ նշանակած գումարների պակասելու գէպքում Խորհուրդները ժողովրդական համապետասխան կոմիտարիատներից խնդրում են լրացուցիչ կրեդիտներ:

88. Տեղական միջոցների պակասի դէպքում սեղական անհետածքելի պէտքերը հոգալու համար պե-

տական գանձարանների օիջոյներից տեղական խորհուրդներին նպաստ կամ պարտք առաջիս է Տ. Ռ. Կ. Գ. Կոմիտէն և Ժող. Կոմ. Խորհուրդը:

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԲՆ ՈՒ ԴՐՈՇԸ

Գլուխ տասեօթերներդ

89. Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան դերբը արելի ճանանչների մէջ, կարմիր ֆոնի վրայ, հասկերի պատկով շրջապատած, կոթերը դէպի վար, խաչած գրած մանդաղի և մուրճի մի պատկերացումն է, հետևալ զրութեամբ՝

ա) Խուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդների Հանրապետութիւն:

բ) Պրոլետարներ բոլոր երկրների՝ միացէք:

90. Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութեան առետրական, ժողովին և զինուորական զրօշը շինած է կարմրագոյն (ալ) կտորից, որի ձախ անկիւնում, փակափ մօտ, վերևում տեղաւորւած էն (Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Կոմիտէտական ֆեդերատիվ Խորհուրդների Հանրապետութիւն) զրութիւնը:

Նախագահ՝ Հ. Ռ. Խ. Վ. բդ Համագումարի և Հ. Ռ.

Կ. Գ. Կոմիտէի՝ ԵԱԿ. ՍՎԵՐԴԼՈՎ:

ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ռ. Կ. Գ. Կոմիտէի Ատեանի անդամներ՝ Տ. Ի.

7/11. 1922

Ա ՇՈՅԼԻԿԻ ԲԻՈԼՈԳԻԿԱ ԹՐՈՒՊԿԻԶ, Ֆ. Ա. ՌՈԶԻՆ, Ա. Պ. ՌՈԶԵՆՉՈԼՅ,

Ա. ՄԱՆՈՒՔԻՆ, Ա. ՄԱՆՈՒՔԻՆ, Կ. Գ. ՄԱԿՍԻՄՈՎ:

Քարտուղար՝ Հ. Ռ. Կ. Կոմիտէի Ա. ԱԿԱՆԻՍՈՎ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0215045

34794

